Co-funded by the European Union

KONRAD ADENAUER STIFTUNG

YOUTH INITIATIVE CENTRE

World Vision ARMENIA

MEDIA INITIATIVES CENTER

Նախագծային ուսուցման ուղեցույց սովորողների համար

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՔԱՂԱՔԱՑԻ

YOUth in Action

«Երիտասարդները գործելիս. Հայաստանում երիտասարդների զորեղացման և առաջնորդության խթանման» ծրագիր

“Youth in Action: Youth Empowerment and Leadership Development in Armenia”

ԵՐԵՎԱՆ 2024

Կարինե Հարությունյան

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՔԱՂԱՔԱՑԻ

Նախագծային ուսուցման ուղեցույց սովորողների համար

ԵՐԵՎԱՆ. 2024

Ուղեցույցի նպատակն է սովորողների մոտ ձևավորել հասարակական կարևոր և արդիական հիմնախնդիրներին միտված ուսումնական նախագծեր իրականացնելու կարողունակություններ, կառուցել կյանքի և գլոբալ մարտահրավերները լուծելու համար անձնական արժեհամակարգ:

Առաջարկվող ուղեցույցը կարող է ուղղորդել սովորողներին և ուսուցիչներին պլանավորելու և իրականացնելու համայնքային գործողության նախագծեր, զարգացնել իրենց ուժեղ կողմերն, ունակությունները (assets) և գործունությունը (agency)՝ դառնալով դրական փոփոխությունների նախաձեռնողներ ու իրականացնողներ, միաժամանակ աջակցել Հանրակրթական պետական չափորոշչում (ՀՊՉ) սահմանված՝ հանրակրթական հիմնական ու միջնակարգ ծրագրերի շրջանավարտների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների ապահովմանը:

Մշակված ուղեցույցի օգնությամբ սովորողները կարող են իրականացնել համայնքային հիմնախնդիրների ուսումնական նախագծեր, որի արդյունքում կձևավորվեն քաղաքացիական մասնակցության, իրենց համայնքերում որոշումներ կայացնելու, նախաձեռնություններ իրականացնելու, առաջնորդական հմտություններ ձևավորելու, մասնագիտական կողմնորոշումները բացահայտելու, հիմնախնդիրների լուծմանն աջակցող առաջարկներ ներկայացնելու կարողություններ:

Սովորողները կդրսևորեն ինքնուրույնություն, վստահություն սեփական ուժերի նկատմամբ, հաջողությամբ կկառավարեն հատկացված ժամանակը, գիտելիքներն ու հմտությունները, ինչպես նաև կձևավորեն հարգանք և պատասխանատվություն ինչպես սեփական անձի, այնպես էլ այլոց հանդեպ:

Սույն ուղեցույցը պատրաստվել է «Պատասխանատու քաղաքացի» նախագծի շրջանակներում: Նախագիծն իրականացվում է «Երիտասարդները գործելիս. Հայաստանում երիտասարդների զորեղացման և առաջնորդության խթանման» ծրագրի շրջանակներում տրված ենթադրամաշնորհի շնորհիվ:

«Երիտասարդները գործելիս. Հայաստանում երիտասարդների զորեղացման և առաջնորդության խթանման» ծրագիրը Եվրոպական միության և Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի կողմից ֆինանսավորվող նախաձեռնություն է, որն իրականացվում է Վորլդ Վիժն Հայաստանի, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի և Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն»–ի հետ համատեղ:

«Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Կարինե Հարությունյանը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները»:

Բովանդակություն

1. Ներածություն 6
2. Ի՞նչ է նախագծային ուսուցումը..... 9
3. Ուսումնական նախագծի առանձնահատկությունները..... 12
4. Հիմնախնդիրներ..... 19
5. Հիմնախնդրի ձևակերպում և ընտրություն..... 29
6. Աշխատանքային խմբերի ձևավորում..... 31
7. Հարցման հարցաշարի կազմման ստուգաթերթ..... 50
8. Հարցազրույցի ոճեր..... 52
9. Հարցազրույցի վարման ձևաթղթեր 56
10. Հանրային պրոդուկտի տեսակներ 58
11. Խմբային աշխատանքի գնահատման սանդղակի նմուշօրինակ..... 65
12. Օգտակար է իմանալ 92

Ներածություն

«Պատասխանատու քաղաքացի» նախագծային ուսուցման ուղեցույցի նպատակը ուսումնական նախագծեր իրականացնելու միջոցով սովորողների՝ հասարակական կյանքին պատասխանատու մասնակցության համար անհրաժեշտ գիտելիքների խորացումն ու հմտությունների զարգացումն է:

Ուսումնական նախագծերի իրականացման շնորհիվ սովորողները կձևավորեն.

- վստահություն սեփական ուժերի և կյանքի հանդեպ,
- հաջողությամբ կկառավարեն սեփական ժամանակը, գիտելիքներն ու հմտությունները,
- կդրսևորեն հարգանք, ազնվություն և պատասխանատվություն ինչպես սեփական անձի, այնպես էլ այլոց հանդեպ՝ անկախ տարիքից, սեռից, ազգությունից, բարեկեցության աստիճանից, արտաքին տեսքից, ընդունակություններից, մասնագիտությունից, համոզմունքներից և այլ առանձնահատկություններից,



- սոցիալական հարաբերություններում կգործեն կառուցողական և համերաշխ,
- կնպաստեն ժողովրդավարության, ազատության, բարեվարքության, սոցիալական արդարության և իրավական պետության գաղափարի վրա հենվող հասարակության զարգացմանը,
- կցուցաբերեն նախաձեռնողականություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք իրագործելու ունակություն և հետևանքների համար պատասխանատու լինելու պատրաստակամություն,
- կկարողանան ընկալել հանրային քաղաքականության անհրաժեշտությունը, քաղաքացիական մասնակցության, իրական կյանքում լավ քաղաքացի լինելու կարևորության ըմբռնումը:

Ուղերձ

Սիրելի սովորող,

Մեր երկրում, մարզում, համայնքում եղել են, կան և կարող են լինել այնպիսի հիմնախնդիրներ, մարտահրավերներ, որոնց մասին դու պետք է տեղեկացված լինես, մասնակցես և օժանդակես, որպես մեր երկրի պատասխանատու քաղաքացի:

Հաճախ մենք կարծում ենք, որ միայն իշխանություններն են պատասխանատու այս կամ այն հիմնախնդրի լուծման համար և չենք կարևորում մեր մասնակցությունն այդ գործընթացներին:

Հուսանք, որ առաջարկվող ուսումնական նախագծային աշխատանքի կազմակերպման մոտեցումներն ու քայլերը կօգնեն քեզ առավել խորը և բազմակողմ ուսումնասիրել հանրային քաղաքականության գործընթացը և հնարավորություն կտան ակտիվ մասնակցություն ցուցաբերելու քո համայնքում, մարզում, երկրում առկա հիմնախնդիրների բարձրաձայնմանը և լուծման ուղիների ներկայացմանը:

Ի՞նչ է նախագծային ուսուցումը

Նախագծային ուսուցումը դասավանդման մեթոդ է, որի միջոցով դուք՝սովորողներդ, ձեռք եք բերում գիտելիքներ և հմտություններ՝ որոշակի ժամանակ հետազոտելով գործնական, համալիր և հրատապ բնույթի հարցեր, խնդիրներ և մարտահրավերներ[1]:

Նախագծային ուսուցման մեթոդը ենթադրում է ուսումնական գործընթացի այնպիսի մոդելավորում, երբ դուք որոշակի տևական ժամանակահատվածում աշխատում եք մարդկանց, հասարակությանը հուզող կենսական կարևոր հիմնախնդիրների շուրջ, ձեռնամուխ լինում իրական, արդիական հիմնահարցերի ուսումնասիրության գործին:

Սովորում եք հետազոտություններ կատարել. աշխատել տեղեկատվական աղբյուրների, տեքստային, թվային և գրաֆիկական տեղեկույթի հետ, հավաքում և վերլուծում եք հիմնախնդրին առնչվող տարաբնույթ տեղեկույթ, կազմակերպում հարցազրույցներ, հանդիպումներ խնդրով շահագրգիռ տարբեր անհատների և կառույցների ներկայացուցիչների հետ:

[1] Շարադրված է՝ ըստ https://www.pblworks.org/what-is-pbl կայքի (դիտված՝ 19.09.24):

Նախագծային ուսուցման մեթոդը ստեղծում է ուսումնական այնպիսի միջավայր, որտեղ խրախուսվում և խթանվում է խմբային աշխատանքը և համագործակցությունը:

Նախագծային ուսուցման մեթոդն արդյունավետ է, քանի որ այն միախառնում է բովանդակության յուրացումը, բովանդակալից աշխատանքը և անձնական կապը՝ ուսումնառության արդյունավետ փորձառություններ ստեղծելու համար:

Բազում հետազոտություններ վկայում են, որ նախագծային ուսուցումը կարող է շրջադարձային լինել ձեզ համար և հատկապես նրանց, ովքեր չեն ուզում սովորել:



Անվիճելի է, որ հասարակական կարևոր և արդիական հիմնախնդիրներին նվիրված ուսումնական նախագծերը կարող են օգտակար լինել ժամանակն արդյունավետ կառավարելու, որոշումներ կայացնելու, ստեղծագործելու, տվյալ իրավիճակին համապատասխան կողմնորոշվելու կարողություն ձևավորելու առումով:

Ուսումնական նախագծերում ձեր ներգրավվման և իմաստալից մասնակցության ապահովման համար կարևորագույն նախապայման է նախագծի իրական կյանքի և խնդիրների հետ կապված[2] լինելը: Սա հավասարապես վերաբերում է նախագծի թե՛ բովանդակությանը, թե՛ դրա իրականացման համար անհրաժեշտ գործիքներին: Ավելին, իրական կյանքին մոտ, իրական խնդիրների անդրադարձող ուսումնական նախագծերը ոչ միայն խթանում են մասնակցությունը, այլև դրական ազդեցություն են ունենում ձեր ձեռքբերումների վրա[3]:

[2] Անգլերենով authentic, authenticity բառերն են օգտագործվում:
[3]The Cambidge Handbook of Learning Sciences, Blumenfeld, Kempler, & Krajcik, 2006.

Ուսումնական նախագծի առանձնահատկությունները

Ուսումնական նախագծերը ենթադրում են բազմաբնույթ աշխատանքներ, ընդ որում հետաքրքիր ու գրավիչ, ինչն էլ առավել լայն հնարավորություններ է ստեղծում այդ աշխատանքներին ակտիվ մասնակցությանն ու ներգրավմանը, ինչպես նաև մասնակիցների համար հավասար պայմանների ապահովմանը:

Վերջինս ենթադրում է անհատական առանձնահատկությունների, կրթական կարիքների և հետաքրքրությունների, ուժեղ կողմերի ու հնարավորությունների իմացություն և խրախուսում՝ աշխատանքներին մասնակից լինելու, որոշակի խնդիրներ լուծելու, կոնկրետ աշխատանքներ կատարելու առումով:

Այսպիսով, նախագծերի միջոցով կարելի է համալիր մոտենալ և միաժամանակ լուծել մի շարք խնդիրներ, այն է՝

- **մասնակցային կրթություն և հավասար պայմաններ,**
- **սովորողակենտրոն ուսումնառություն,**
- **կրթություն՝ գործելու միջոցով,**
- **կենսական խնդիրների լուծում՝ գիտելիքների կիրառման միջոցով,**
- **շփման և հաղորդակցության հմտությունների, համագործակցության և փոխօգնության կարողությունների ձևավորում[4]:**

[4] Աղբյուրը՝ https://www.pblworks.org/educational-equity (դիտված՝ 14.09.24):

Նախագծային ուսումնառության աշխատանքների ընթացքում ձեր՝ սովորողների միջև, որպես կանոն, ձևավորվում է հանդուրժողականություն և փոխադարձ վստահություն, համատեղ աշխատանքի ընթացքում սկսում եք ավելի լավ ճանաչել ինքներդ ձեզ և ձեր ընկերներին, համագործակցում եք նաև ավագ ընկերների, մեծահասակների հետ: Համատեղ արդյունք գրանցելու համար մեկտեղվում են բոլորի ջանքերը, միավորվում են մանկավարժները, ծնողներն ու համայնքի տարբեր ներկայացուցիչներ, իսկ աշխատանքի ավարտին ունենում եք իրական, շոշափելի արդյունք:

Այսպիսով, արդյունավետ ուսումնական նախագիծը ենթադրում է.

- մտահոգիչ հարցի կամ իրավիճակի առկայություն՝ որպես մարտահրավեր. նախագիծը կառուցվում է որևէ արդիական, իմաստալից խնդրի/իրավիճակի շուրջ և փորձում է դրան լուծում տալ,

- հետևողական հետաքրքրություն և կանոնավոր ուսումնասիրություններ. Մասնակիցները ներգրավվում են հարցեր առաջադրելու, ռեսուրսներ գտնելու և ձեռք բերած տեղեկատվությունն արդյունավետ կերպով օգտագործելու խստապահանջ և տևական գործընթացում,

- նախագծերի թեմաների արդիականությունը և կյանքին մոտ լինելը. նախագծի թեման ներառում է ժամանակակից առաջադրանքներ և գործիքներ, որակի չափանիշներ կամ ազդեցություն,

- սովորողի ձայն և ընտրություն. որոշումներ են կայացվում իրականացվող աշխատանքների վերաբերյալ,

- հանրային արդյունք. սովորողների աշխատանքի արդյունքը հրապարակավ ցուցադրվում, քննարկվում և ներկայացվում է դպրոցում կամ համայնքում հանրության առաջ,

- անդրադարձ. սովորողներն ու ուսուցիչներն անդրադառնում են իրենց ձեռքբերումներին և աշխատանքի որակին, ընթացքում ծագած խոչընդոտներին և դրանց հաղթահարման միջոցներին,

- քննադատություն և վերանայում. սովորողները տալիս և ստանում են առաջարկներ՝ ստեղծված պրոդուկտը և իրականացման գործընթացը բարելավելու ուղղությամբ:

Հարկ է նշել, որ, ըստ տևողության, ուսումնական նախագիծը կարող է լինել կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ, ըստ մասնակցության ձևաչափի՝ անհատական և խմբային:

Գործնական աշխատանքների մակարդակում ուսումնական նախագծային աշխատանքն ունի իրականացման քայլերի հետևյալ տրամաբանությունը՝

Հիմնախնդիրներ

Սիրելի սովորող, նախագծային աշխատանքը սկսելուց առաջ դու կարող ես նախապես ուսումնասիրել, թե՝

- ի՞նչ հիմնախնդիրներ, մարտահրավերներ կան քո համայնքում /մարզ, քաղաք, գյուղ/, երկրում՝ որոնց մասին դու, որպես **պատասխանատու քաղաքացի** պետք է տեղեկացված լինենս,
- կարո՞ղ ես համոզված լինել, որ հիմնախնդիրը կարևոր է և հրատապ,
- ինչպե՞ս կարող ես ուսումնասիրել այդ հիմնախնդիրները և հավաքել բավարար տեղեկություն, որ կարողանաս վերլուծել և հիմնավորել, առաջարկել լուծման գործընթացին օժանդակող, աջակցող քայլեր:

Հիմնախնդիրները կամ մարտահրավերային հարցերը կարող են վերաբերել հասարակության մեջ դրսևորվող տարաբնույթ սոցիալական երևույթներին ու գործընթացներին, օրինակ՝ անհավասարությանը, անարդարությանը, անհանդուրժողականությանը, անպատասխանատվությանը, կոնֆլիկտների առաջացմանը, մարդու իրավունքների ոտնահարմանը, շրջակա միջավայրի հանդեպ ոչ բարեխիղճ վերաբերմունքի դրսևորմանը և այլն:

Ստորև ներկայացնում ենք դպրոցներին, համայնքին, շրջակա միջավայրին վերաբերվող հիմնախնդիրների օրինակներ.

Առանձնահատուկ կարիք ունեցող սովորողների ինտեգրման դժվարությունները

Ատելության խոսքի դրսևորումները սոցիալական ցանցերում և դրանց բացասական ազդեցությունները

Արվեստի խմբակների բացակայությունը մեր համայնքի դպրոցներում

Բուլինգի դրսևորումները դպրոցում և դրա բացասական հետևանանքները

Ֆիզկուլտդահլիճի բացակայությունը դպրոցում

Հարթասանդուղքների բացակայությունը դպրոցում

Բուժկետի բացակայությունը դպրոցում

Դպրոցամերձ ճանապարհներին արագության սահմանափակման նշանների բացակայությունը

Ներհամայնքային ճանապարհների անմխիթար վիճակը

Թոշակառուների համար նախատեսվող ժամանցի վայրերի բացակայությունը համայնքում

Երիտասարդների համար նախատեսվող ժամանցի վայրերի բացակայությունը համայնքում

Աղբի տեսակավորման մշակույթի բացակայությունը համայնքում

Ժամանցային կենտրոնների բացակայությունը գյուղական համայնքում

Օնլայն գնումներ կատարելու մշակույթի պակասը մեր համայնքում

Հասարակական տրանսպորտում հնչող ռաբիզ երաժշտության բացասական ազդեցությունը

Մշակութային արժեքների նկատմամբ անհանդուրժողականության դրսևորումները համայնքում

Անտառահատման վնասակար հետևանքները մեր համայնքում

Աղբի այրման բացասական հետևանքների մասին տեղեկատվության պակասը մեր համայնքում

Թափոնների վերամշակման նոր տեխնոլոգիաների և կազմակերպությունների պակասը մեր համայնքում

Հանքային վառելիքի այրման բացասական հետևանքները մեր համայնքում

Ֆինանսական ծառայություններ ընտրելու գրագիտության պակասը մեր համայնքում

Փողոցային լուսավորության բացակայությունը մեր համայնքում

Աշխատատեղերի բացակայությունը մեր համայնքում

Ինչպե՞ս կանխել կամ նվազեցնել մարդու գործունեության հետևանքով բնությանը հասցվող վնասները մեր համայնքում

Թափոնների խնայողությունը որպես գեղարվեստական նոր արժեք ստեղծելու միջոց

Ինչպե՞ս կարելի է պաշտպանվել ֆինանսական խարդախություններից և զեղծարարություններից

Հանքարդյունաբերության արտանետումների վնասակար ազդեցությունները

Ինչպե՞ս կանխել կամ նվազեցնել մարդու գործունեության հետևանքով շրջակա միջավայրին հասցվող վնասները

Խնայողության մշակույթի գրագիտության պակասը մեծահասակների շրջանում

Վարկերից օգտվելու գրագիտության պակասը

Հանքային վառելիքի այրման բասացական հետևանքները

Պարարտանյութերի և թունաքիմիկատների սխալ պահպանումը, օգտագործումը և չարաշահումը գյուղատնտեսության մեջ

1. Հիմնախնդրի ձևակերպում

Հիմնախնդրի ձևակերպման համար կարևոր է, որ դուք նախապես ուսումնասիրեք, թե ինչ խնդիրներ եք տեսնում ձեր դպրոցում, համայնքում կամ մարզում: Այդ գործընթացում ձեզ կարող են օգնել, ուսուցիչները, ծնողները, համայնքում բնակվողները և այլն:

Երբ արդեն իրականացրել եք ուսումնասիրություն և ունեք ձեր կողմից ձևակերպված հիմնախնդիրները, հարկավոր է նաև որ դուք կարողանաք պատրաստվել 5 րոպեանոց ելույթի, որի ընթացքում պետք է հիմնավորեք խնդրի կարևորությունը, հրատապությունն ու արդիականությունը, այլ խոսքով՝ համոզեք «ընտրողների» լսարանին, ինչպես դա արվում է օրինակ՝ քարոզարշավների ժամանակ:

1. 1. Հիմնախնդրի ընտրություն

Հիմնախնդրի ընտրությունն առաջարկում ենք կազմակերպել քվեարկության միջոցով.

Նախապես գրատախտակին կամ էկրանին պետք է գրանցել ձևակերպված բոլոր հիմնախնդիրները: Քվերակությունն իրականացնելու համար մասնակիցները պետք է անհատապես մոտենան գրատախտակին (ֆլիպչարտին կամ էկրանին) և նշեն ցանկից նախընտրած հիմնախնդրը: Ավարտից հետո առավելագույն միավոր հավաքած հիմնախնդիրն ընդունվում է որպես նախագծի թեմա, իսկ եթե մեկից ավելի հիմնախնդիրներ ունենում են հավասար միավորներ, ապա ընտրության գործընթացը կրկնվում է միայն հավասար միավորներ հավաքածների համար:

1.2. Աշխատանքային խմբերի ձևավորում

Հիմնախնդրի ուսումնասիրությունն իրականացնելու համար արդյունավետ է ձևավորել աշխատանքային խմբեր: Խմբերի բոլոր անդամները նախապես պետք է իմանան, որ պատասխանատու են իրենց կողմից իրականացվող առաջադրանքների կատարման համար:

Այնուհետև պետք է համատեղ շարադրվեն ուղղորդող հարցերը, որոնք օգտակար կլինեն նախագծի իրականացման ընթացքում, օրինակ.

1 Ո՞րն է ընտրված հիմնախնդրի կարևորությունը:

2 Ի՞նչ տարածվածություն ունի հիմնախնդիրը մեր համայնքում/մարզում/երկրում:

3 Ինչպե՞ս է հիմնախնդիրն ազդում հասարակական մեծ և փոքր խմբերի վրա:

4 Ինչպե՞ս կարող ենք ուսումնասիրել մեր հիմնախնդիրը՝ հավաքագրելով բավարար տեղեկություն, որպեսզի կարողանանք վերլուծել, հիմնավորել և առաջարկել լուծման գործընթացին օժանդակող, աջակցող քայլեր:

5 Որո՞նք են այն կառույցները (հասարակական կազմակերպություններ, պետական կառույցներ, շահագրգիռ խմբեր, մասնագետներ և այլն), որ կարող են աջակցել հիմնախնդրի լուծմանը:

6 Ի՞նչ կարող ենք անել մենք՝ հիմնախնդրի լուծմանն աջակցելու նպատակով:

Առաջադրանք 1.

Անհրաժեշտ է տեղեկատվական աղբյուրներում ուսումնասիրել և հավաքագրել հիմնախնդրին առնչվող բոլոր հնարավոր նյութերը.

Լրատվամիջոցներ

Դասագրքեր, ուսումնական նյութեր

Համացանց

Հիմնախնդրին առնչվող՝ տեսանյութեր, ձայնագրություններ, նկարներ, ատլասներ, գրաֆիկներ, դիագրամներ, անիմացիաներ, և այլն:

Վիճակագրական տվյալներ, սոց. հարցումներ

Հիշի՛ր, պետք է օգտվել միայն հավաստի և պաշտոնապես երաշխավորված կայքէջերից, անպայման նշելով կայքէջերի հղումները և նյութերի աղբյուրները:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև տեղեկությունը հրապարակողի ինքնությանը, տեղեկության հրապարակման տարեթվին ու ամսաթվին:




Առցանց անվտանգ գնումներ
https://paymentsonline/creditcardinfo/9=phpansjdkasgdfex12
Քարտի հասցե
Քարտատիրոջ անուն և ազգանուն
Վավերականության ժամկետ
CVV կոդ
MasterCard SecureCode
3D Secure
VERIFIED by VISA

Լրատվամիջոցներ

Ձեր հիմնախնդրի մասին կարող եք տեղեկություններ հավաքել՝ կապվելով քաղաքում (մարզում) գործող լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ: Լրագրողները տեղեկություններ են հավաքում կառավարության գործունեության, հասարակական և համայնքային հնչեղություն ունեցող հիմնախնդիրների վերաբերյալ: Ուստի, նրանք կարող են ձեզ կարևոր տեղեկություններ հաղորդել կամ նույնիսկ նկարներ ու այլ փաստեր տրամադրել:

Գիտամանկավարժական աշխատողներ

Համալսարանների դասախոսները, գիտաշխատողները կարող են ձեր կողմից ուսումնասիրվող հիմնախնդրի փորձագետներ լինել: Այցելելով համալսարաններ կամ հեռախոսով կապվելով նրանց հետ, կարող եք ավելի մանրամասն տեղեկություններ ստանալ: Կարող եք նաև տեղեկություններ հավաքել դպրոցի ուսուցիչներից:

Փաստաբաններ և դատավորներ

Շատ փաստաբաններ և դատավորներ անդամակցում են հասարակության տարբեր խմբերին իրավաբանական անվճար ծառայություններ մատուցող կազմակերպությունների: Նրանք քաջատեղյակ են համայնքի հիմնախնդիրներին: Կարող եք նաև դպրոցի տնօրենից տեղեկանալ այն անձանց մասին, ովքեր մասնագիտությամբ իրավաբաններ են:

Համայնքային կազմակերություններ և շահագրգիռ խմբեր

Բազմաթիվ խմբեր (օրինակ՝ հասարակական կազմակերպություններ՝ ՀԿ-ներ) իրենց հետաքրքրություններն ունեն այն հիմնախնդիրների վերաբերյալ, որոնք առկա են մեր երկրում կամ համայնքում: Այդ խմբերին կոչում են նաև *շահագրգիռ խմբեր*: Ձեր դասարանի աշակերտները պետք է փորձեն բացահայտել այնպիսի խմբեր, որոնք զբաղվում են ձեր հիմնախնդրով: Ուսուցիչները, ծնողները, այլ անձինք կարող են օգնել ձեզ գտնել նրանց հետ կապ հաստատելու ուղիներ:

Օրենսդիր մարմին

Ազգային ժողովի (ԱԺ) պատգամավորները պատասխանատու են հանրային հիմնախնդիրները բացահայտելու և դրանց վերաբերյալ հանրային (պետական) քաղաքականություն մշակելու համար: ՀՀ Ազգային ժողովի պատգամավորները և պատգամավորական խմբակցությունները գրասենյակներ ունեն ինչպես Ազգային ժողովում, այնպես էլ իրենց ընտրատարածքներում: Նրանց հեռախոսահամարները կարելի է գտնել տեղեկագրերում կամ համացանցում:

Վարչական հիմնարկ-ձեռնարկություններ

Համայնքային, մարզային, քաղաքային վարչական հիմնարկներում, կառավարական մարմիններում աշխատող անձինք հնարավոր է, որ առնչվեն ձեր կողմից ուսումնասիրվող հիմնախնդրին: Այդ պետական կառույցները կարող են տեղեկություններ հաղորդել հիմնախնդրի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկացնել իշխանությունների կողմից կատարվող գործողությունների մասին:

Համացանց (ինտերնետ)

Վերոհիշյալ բոլոր աղբյուրների հետ շփվելու և նրանց աջակցությունը ստանալու գերազանց հնարավորություն է տալիս համացանցը՝ համաշխարհային էլեկտրոնային ցանցը:

Ոլորտի պատասխանատուներ

Այդ կառույցները, օրինակ՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Առողջապահության նախարարություն, Արդարադատության նախարարություն, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (ԿԳՄՍՆ), Շրջակա միջավայրի նախարարություն և այլն, կարող են տեղեկություններ տրամադրել հիմնախնդրի վերաբերյալ:

Առաջադրանք 2.

Առաջադրանքի այս փուլում անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնախնդրին առնչվող առկա օրենսդրությունը կամ քաղաքականությունը, և այն, թե իշխանության ո՞ր օղակներն են դրանով զբաղվում: Մեդիա աղբյուրներից կարևոր է դուրս բերել հիմնախնդրին առնչվող օրենսդրական հոդվածները, պարբերությունները՝ նշելով հղումները:
Հիմնախնդրին առնչվող օրենսդրությունը կամ քաղաքականությունն ուսումնասիրելու ընթացքում կարևոր է փնտրել ստորև ներկայացված հարցերի պատասխանները.

- Ի՞նչ տարածվածություն ունի հիմնախնդիրը մեր երկրում:
- Արդոք առկա՞ է հիմնախնդրին առնչվող օրենսդրությունը:
- Ինչպե՞ս է իրականացվում հիմնախնդրին առնչվող օրենսդրությունը:
- Իշխանության ո՞ր օղակներն են պատասխանատու հիմնախնդրի լուծման համար: Ի՞նչ են անում նրանք այդ ուղղությամբ:
- Ի՞նչ անհամաձայնություն կա իշխանության մարմինների, շահագրգիռ խմբերի, մասնագետների և այլ քաղաքացիների միջև այդ քաղաքականության նկատմամբ:

- Ինչպե՞ս են այդ անհատները, խմբերը կամ կազմակերպությունները փորձում ազդել իշխանության մարմինների վրա՝ հիմնախնդրի լուծմանն ուղղված հանրային քաղաքականություն մշակելու և իրականացնելու համար:
- Ո՞վքեր են այն անհատները, խմբերը կամ կազմակերպությունները, որոնք հետաքրքրություն են դրսևորում և կարծիք արտահայտում հիմնախնդրի վերաբերյալ:
- Որո՞նք են նրանց դիրքորոշումների կամ կարծիքների առավելություններն ու թերությունները:
- Ինչպե՞ս կարող ենք ավելի մանրամասն տեղեկություն ստանալ նրանց դիրքորոշումների, կարծիքների մասին:

Հիշի՛ր.
Պետք է օգտվել միայն հավաստի և պաշտոնապես երաշխավորված կայքէջերից, անպայման նշելով կայքէջերի հղումները և նյութերի աղբյուրները:

Առաջադրանք 3.

Հարցազրույցի անցկացում

Հիմնախնդիրը հիմնավորելու և լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար չափազանց կարևոր է հարցազրույցի անցկացումը:

Հարցազրույցի նպատակն է պարզել հիմնախնդրի վերաբերյալ քաղաքացիների և ոլորտի պատասխանատուների իրազեկվածության մակարդակն ու վերաբերմունքը, ինչպես նաև հավաքագրել օգտակար տեղեկություններ հիմնախնդրի վերաբերյալ:

Հարցերի տեսակներ՝ ըստ ակնկալվող պատասխանի բնույթի

Բաց հարցեր, որոնց պատասխանը մեկ բառ, արտահայտություն, նախադասություն կամ տեքստ է:

Ընտրովի/բազմակի ընտրությամբ - հարցվողն ընտրում է պատասխանը/ները ներկայացված ցանկից:

Միջակայքով - ենթադրում է մեկ հնարավոր պատասխան, տրված միջակայքից:

Օրինակ՝ ընտրել տարիքը հետևյալ միջակայքերից:

ա) 0-10, բ) 11-15, գ) 16-20 դ) 20-50:

Կարգով - պահանջում է դասավորել տրված հասկացությունները ըստ որոշակի սկզբունքի:

Քանակական - պատասխանը հստակ կամ մոտավոր թիվ է:

Սանդղակով - պահանջում է տալ պատասխանը տրված սանդղակի սահմաններում: Օրինակ՝ նշել 1-10 սանդղակում, թե որքանո՞վ եք գոհ նախաճաշի որակից:

Երկիմաստ և անհստակ հարցեր: Օրինակ, եթե հարցնում եք «Որքա՞ն ժամանակ եք ծախսում տնային աշխատանքի վրա» և առաջարկում ընտրել «շատ» կամ «քիչ» տարբերակներից, վերլուծության ժամանակ պարզ չի լինում, թե արդյոք պատասխանողի գնահատմամբ և ձեր գնահատմամբ շատը կամ քիչը ինչ ժամաքանակ են ենթադրում:

Ենթադրություն: Օրինակ, եթե հարցնում եք՝ «Նշեք, թե դուք քանի՞ բաժակ հյութ եք խմում մեկ շաբաթում»: Պատասխանողը կարող է դժվարանալ պատասխանել, եթե հյութ ընդհանրապես չի խմում, կամ խմում է միայն ձմռան ամիսներին և այլն:

Հիշողության վրա հենվող կամ գիտելիքահեն: Ցանկալի չէ տալ այնպիսի հարց, որի պատասխանը հարցվողը պատասխանելու պահին կարող է չիմանալ կամ չհիշել:

Կրկնակի հարցեր: Ցանկալի չէ տալ երկու հարց միաժամանակ, քանի որ կարող եք ստանալ միայն մեկ պատասխան և չկողմնորոշվել՝ ո՞ր հարցի պատասխանն է այն: Օրինակ՝ «Ինչո՞ւ և որքա՞ն հաճախ եք օգտվում առցանց վաճառքի ծառայություններից»:

Ուղղորդող հարցեր: Զգայական լեզուն և հարցադրման ոճը կարող են ազդել հարցվողի պատասխանի վրա: Օրինակ՝ «Համաձայն չե՞ք, որ սովորողները դասի ընթացքում պետք է իրավունք ունենան իրենց կարծիքն արտահայտելու» (հարցը նվազեցնում է «ոչ» պատասխանի հավանականությունը):

Ենթատեքստով հարցեր: Հարցումների ժամանակ նման հարցերը հաճախ սխալների աղբյուր են դառնում: Դրանք հարցաշարում կարող են ներառվել այն պատճառով, որ հետազոտողն ունի հիմնավոր հայացքներ կամ ընկալումներ տվյալ թեմայի վերաբերյալ և անտեսում է այն փաստը, որ բոլորը կարող են նույն հայացքները կամ ընկալումները չկիսել/չունենալ: Օրինակ, «Չե՞ք կարծում արդյոք, որ մեր երկրում պատասխանատու կառույցները ոչ բավարար միջոցներ են նախատեսում աղբի վերամշակման համար»:

Հիպոթետիկ հարցեր: Խուսափեք այնպիսի հարցերից, որոնցով անօգուտ պատասխաններ կստանաք: Օրինակ՝ «Եթե չունենայիք ընտանեկան պարտականություններ և ունենայիք շատ փող, կճամփորդեի՞ք աշխարհով մեկ և կապրեի՞ք բարձրակարգ հյուրանոցներում»: Պատասխան՝ «Ես ընտանեկան պարտականություններ ունեմ: Ես փող չունեմ և երբեք չեմ ունենա, որքան հասկանում եմ, ուրեմն ի՞նչ իմաստ ունի մտածել այդ մասին»:

Վիրավորական կամ զգայուն հարցեր: Եթե ստիպված եք ներառել զգայուն հարցեր, ապա բառերը մտածված և զգույշ շարադրեք: Օրինակ՝ տարիքը հաճախ զգայուն կատեգորիայի հարց է համարվում: Հարցվողներին խնդրեք նշել ոչ թե իրենց ճշգրիտ տարիքը, այլ տարիքային միջակայքը (22–25, 26–30 և այլն):

Հարցման հարցաշարի կազմման ստուգաթերթ

Փորձիր ամփոփել այն քայլերը, որոնք պետք է նախատեսել հարցումը կազմելիս և տվյալները հավաքելիս:

Հարցրու ինքդ քեզ.

Ի՞նչ տեղեկություն է ինձ անհրաժեշտ:

Ինչպե՞ս եմ վերլուծելու տեղեկությունը:

Ու՞մ եմ խնդրելու մասնակցել հարցմանը:

Քանի՞ հոգի է նախատեսվում ընդգրկել:

Որքա՞ն ժամանակ է անհրաժեշտ հարցումն իրականացնելու համար:

Բացի հարցերի պատասխաններից, ինչպե՞ս եմ ստանալու հետադարձ կապ այն մարդկանցից, որոնք աջակցելու են:

Քանի՞ պատասխան եմ ակնկալում հավաքագրել:

Ի՞նչ խնդիրներ կարող են առաջանալ:

Հիշի՛ր.

- Հարցման մեջ հրահանգները պետք է լինեն արտահայտիչ/տեսանելի (մեծատառով կամ այլ տառատեսակով):
- Հարցերի միջև թողած տարածությունը կօգնի ավելի հեշտ վերլուծել պատասխանները:
- Պատասխանների համար նախատեսված վանդակները ցանկալի է նախատեսել աջ կողմում: Այն կօգնի չշփոթել պատասխանները:
- Ուշադիր պետք է լինել հարցերի հաջորդականության հարցում: Զգացմունքային հարցերը ցանկալի է թողնել վերջում, սկզբում՝ պարզ, հեշտ լրացվող հարցեր, այնուհետև՝ ավելի բարդ:
- Կարևոր է շնորհակալություն հայտնել հարցազրույցի համար:

Կառուցվածքային հարցազրույցներ

Կառուցվածքային հարցազրույցների ձևաչափը հնարավորություն է տալիս պատասխանները նշել նախօրոք պատրաստած հարցաշարերում: Հարցազրույցից հետո բոլոր պատասխանները պետք է նշվեն ամփոփման թերթիկի մեջ, որից հետո վերլուծվեն:

Հիշի՛ր.

- Անհրաժեշտ է նախապես ունենալ հարցվողի համաձայնությունը, և եթե հարցազրույցին մասնակցողը չի ցանկանում հրապարակել իր անունը, ապա պետք է նշել միայն նրա դերը համայնքում, օրինակ՝ ուսուցիչ, ծնող, սովորող, համայնքի բնակիչ և այլն:
- Ցանկալի է ունենալ հարցազրույցների ձայնագրություններն ու նկարները՝ դարձյալ նախապես ունենալով հարցվողի համաձայնությունը:

Ազատ հարցազրույցներ

Ազատ հարցազրույցները, որոնք հստակ մի թեմայի շուրջ են, շատ արժեքավոր տվյալներ կարող են տրամադրել, սակայն դրանք պահանջում են փորձառություն և բավականին ժամանակ, որպեսզի վերլուծվեն ունեցած տվյալները:

Անհրաժեշտ է հիշել, որ հարցազրույցը գուցե շատ հետաքրքիր լինի, բայց այն զուտ բովանդակային զրույց չէ, այլ հարցազրույց, այսինքն՝ խոսակցություն, որն ունի հստակ նպատակ:

Կախված հիմնախնդրի բովանդակությունից, անհրաժեշտ է ճիշտ թիրախավորել հարցվողների տարիքային խմբերը: Օրինակ, եթե ընտրվել է «Վարկերից օգտվելու գրագիտության պակասը մեր համայնքում» հիմնախնդիրը, ապա հարցմանը կամ հարցազրույցներին պետք է մասնակցեն 18-ից բարձր տարիքային խմբերը, քանի որ անչափահասներն իրավունք չունեն վարկ վերցնելու:

Հարցազրույցներ կարող է իրականացվել՝ այցելելով համապատասխան կազմակերպությունների գրասենյակներ (նախապես պայմանավորվածություն ձեռք բերելուց հետո), ինչպես նաև հեռախոսազանգի կամ առցանց կապի միջոցով: Համայնքում ապրող քաղաքացիների կողմից ներկայացված պատասխանները ամփոփվելու են առանձին, ոլորտի պատասխանատուներինն՝ առանձին:

Ստորև ներկայացվում են համայնքի բնակիչների և ոլորտի պատասխանատուների հետ հարցազրույցների անցկացման ձևաթղթերի նմուշ-օրինակները:

Ձևաթուղթ՝ *նախատեսված է համայնքի բնակիչների համար*

Հարցազրույցի վարման ձև

Սովորողի անունը _____

Դպրոցի անվանումը _____

Հարցադրվողի անունը (*կամ դերը համայնքում*) _____

Ամսաթիվը _____

Ուսումնասիրվող հիմնախնդիրը _____

1. Կարևորում ե՞ք արդյոք մեր կողմից *ուսումնասիրվող հիմնախնդիրը*: Խնդրում ենք հիմնավորել պատասխանը:
2. Կարո՞ղ եք մեզ տրամադրել տեղեկություններ՝ հիմնախնդրի հետևանքով համայնքում, մարզում կամ երկրում առաջացած թերությունների կամ վտանգների վերաբերյալ:
4. Ձեր կարծիքով ո՞ր կառույցները կամ անհատները կարող են մեզ տեղեկություն տրամադրել այս խնդրի վերաբերյալ:
5. Խնդիրը կանխելուն ուղղված ի՞նչ լուծումներ կարող եք առաջարկել:

Ձևաթուղթ՝ *նախատեսված է ոլորտի պատասխանատուների համար*

Հարցազրույցի վարման ձև

Սովորողի անունը _____

Դպրոցի անվանումը _____

Հարցադրվողի անունը (կամ դերը համայնքում) _____

Ամսաթիվը _____

Ուսումնասիրվող հիմնախնդիրը _____

1. Ձեր կարծիքով որքանով է կարևոր այս հիմնախնդիրը: Խնդրում ենք ասել մեկ-երկու հիմնավորում:
2. Խնդրում ենք մեզ ուղղորդել, թե ինչպե՞ս է այս հիմնախնդիրն անդրադառնում հասարակության տարբեր խմբերի վրա:
3. Ի՞նչ տարածվածություն ունի այս հիմնախնդիրը մեր համայնքում/մարզում, երկրում:
4. Կա՞ն արդյոք անհատներ, խմբեր կամ կազմակերպություններ մեր համայնքում/մարզում, երկրում որոնք հետաքրքրված են հիմնախնդրի լուծմամբ:
5. Իշխանության ո՞ր օղակներն են պատասխանատու հիմնախնդրի լուծման համար:
6. Արդյոք գոյություն ունի՞ հիմնախնդրին առնչվող օրենսդրություն կամ քաղաքականություն: Խնդրում ենք հակիրճ ներակայացնել՝ նշելով աղբյուրները:
7. Խնդիրը կանխելուն ուղղված ի՞նչ լուծումներ կարող եք առաջարկել:

Առաջադրանք 4. Գործողությունների ծրագրի առաջարկ. հանրային պրոդուկտ

Առաջադրանքի այս փուլում, երբ արդեն ավարտել եք ուսումնասիրել մեդիա աղբյուրները, դուրս բերել հիմնախնդրին առնչվող տեղեկատվությունները, օրենսդրությունը կամ քաղաքականությունը, հավաքագրել հիմնախնդիրը տեսանելի դարձնող նկարներ, վիճակագրական տվյալներ, գծապատկերներ և այլն, իրականացնել հարցազրույցներ և ամփոփել աշխատանքները, անհրաժեշտ է ավարտուն տեսքի բերել և ամբողջացնել կատարված աշխատանքը: Այնուհետև համատեղ ջանքերով պետք է մշակել հիմնախնդրի լուծմանն աջակցող գործողությունների ծրագիր և որոշել հանրային պրոդուկտի տեսակը:

Հիշի՛ր.

Ստեղծված հանրային պրոդուկտի օգնությամբ հնարավոր է աջակցել հիմնախնդրի լուծմանը:

Հանրային պրոդուկտի տեսակներ.

- Սոցիալական հոլովակների կամ սահիկաշարի պատրաստում:
- Գովազդային հոլովակների պատրաստում:
- Տեսաֆիլմի ստեղծում:
- Կոմիքսների ստեղծում:
- Ֆոտոէսսեի ստեղծում:

- Ձայնվածքի ստեղծում/ փոդքաստ/:
- Համակարգչային ծրագրի ստեղծում:
- Խաղերի ստեղծում:
- Դասընթացների կազմակերպում սովորողների, համայնքի բնակիչների և խնդրով մտահոգ քաղաքացիների համար:
- Կլոր սեղան քննարկումների նախաձեռնում՝ շահագրգիռ բոլոր կառույցների մասնակցությամբ:

- Միջդպրոցական, համայնքային միջոցառումների, մրցույթների կազմակերպում օրինակ՝ «Պահպանենք մեր բնությունը» և այլ թեմաներով:
- Բուկլետների պատրաստում և տարածում դպրոցում, համայնքում, մարզում, բնակիչների շրջանում:
- Կայքէջի ստեղծում:

- Ֆլեշմոբերի կազմակերպում, այնուհետև տարածում համապատասխան կայքէջերում:
- Հիմնախնդիրը ներկայացնող պաստառների ստեղծում:
- Նամակ-ուղերձ՝ պատկան մարմիններին (համայնքապետարան, մարզպետարան և այլն):
- Մասնակցություն հիմնախնդրի լուծմամբ զբաղվող կառույցների աշխատանքներին և այլն:

Առաջադրանք 5. Նախագծային աշխատանքի ներկայացում և գնահատում

Առաջադրանքի այս փուլում պետք է պատրաստվել ներկայացնելու կատարված աշխատանքը, որը գնահատվելու է մշակված սանդղակի չափանիշներով:

Առաջարկում ենք աշխատանքը ներկայացնել սահիկաշարի տեսքով:

Հիշի՛ր.

հանրային ներկայացման ժամանակ կարևոր է.

- ներկայանալ կոկիկ հագուկապով,
- ուշադիր լինել կեցվածքին, դիրքին, ժեստերի լեզվին,
- հայացքն ուղղել լսարանին,
- խաղալ ձայնի տոնայնության հետ,
- պարբերաբար անել անհրաժեշտ դադարներ,
- հետևել դեմքի միմիկային,
- համաչափ, դանդաղ շարժվել լսարանում,
- ցուցաբերել դերասանի վարպետություն,
- խոսել ժպիտով և համոզիչ:

Ինչո՞ւ սահիկաշար.

Սահիկաշարը հնարավորություն է տալիս համակարգված, տրամաբանական հաջորդականությամբ ներկայացնելու լսարանին՝ ուսուցչին, դասընկերներին, հյուրերին (եթե կան), կատարված աշխատանքի ողջ գործընթացը: Սահիկաշարը օգնում է բանավոր խոսքի ներկայացման ժամանակ, քանի որ այնտեղ սեղմ շարադրված են այն ենթակետերը, որոնց շուրջ պետք է կառուցվի խոսքը:

Նախագծի վերջնական ադյունքի (պրոդուկտի) ներկայացումը հանրության առջև զարգացնում է հաղորդակցական, հանրային խոսքը կառուցելու հմտություններ: Խմբի բոլոր անդամները հավասարապես խոսելու հնարավորություն են ունենում:

Խմբի ելույթից հետո ուսուցիչները (ներկաները, մասնակիցները) հարցեր են տալիս, և ծավալվում է քննարկում: Քննարկման ընթացքում մասնակիցներն առանձնացնում են աշխատանքի հաջողված կողմերը, նշում, թե ինչը կարելի է բարելավել և ներկայացնում առաջարկներ: Այնուհետև, օգտվելով գնահատման սանդղակից, մասնակիցները գնահատում են ելույթները (ներկայացնող խումբը ևս կարող է գնահատել իր ելույթը, աշխատանքը):

Խմբային աշխատանքների գնահատման սանդղակի նմուշօրինակ

Միավորներ / Չափանիշներ	1-3	4-6	7-8	9-10
Բովանդակություն	Ուսումնասիրությունները չեն առնչվում հիմնախնդրին: Բացակայում է նյութի շարադրման տրամաբանական հաջորդականությունը:	Ուսումնասիրությունները մասամբ են առնչվում հիմնախնդրին: Նյութի շարադրանքը ինչ-որ չափով տրամաբանական է, սակայն առանձին հարցեր անհասկանալի են:	Ուսումնասիրություններն առնչվում են հիմնախնդրին: Նյութի շարադրանքը տրամաբանական է, առանձին բաղկացուցիչ մասերը փոխլրացնում են իրար:	Ուսումնասիրությունները արտացոլում են հիմնարար հարցերը: Նախագծի բովանդակությունը հասկանալի է, տրամաբանորեն շարադրված, ընկալելի:
Ինքնատիպություն	Նյութերը ներկայացվում են առանց որոշակի մշակման, սահմանափակ քանակի միաբնույթ տեղեկատվական աղբյուրների հիման վրա:	Նյութերը ներկայացվում են միօրինակ: Առկա են տարբեր տեղեկատվական աղբյուրներ:	Նյութերը բազմազան են, ներկայացվում են հետաքրքիր մոտեցմամբ: Առկա են հեղինակային գաղափարներ: Ներառված է մեծածավալ տեղեկատվություն տարբեր աղբյուրներից:	Նյութերը բազմազան են, ներկայացվում են յուրօրինակ մոտեցմամբ: Աշխատանքն աչքի է ընկնում առանձնահատուկ գաղափարներով, տեղեկատվությունը հավաքագրված է տարաբնույթ աղբյուրներից և ստեղծագործաբար վերլուծված է:
Մուլտիմեդիայի օգտագործում	Նյութերում բացակայում են մեդիա աղբյուրներ, մուլտիմեդիոն նյութեր, հղումներ:	Նյութերում օգտագործված են մեկ-երկու տեղեկատվության աղբյուր՝ իրենց հղումներով, մեկ-երկու մուլտիմեդիոն նյութեր, որոնց ներկայացումը համակարգված չէ:	Նյութերում օգտագործված են մեդիա աղբյուրներ իրենց հղումներով, մեդիա նյութեր՝ գծապատկերներ, դիագրամներ, ծաղրանկարներ, նկարներ, տեսանյութեր, ձայնագրություններ: Կիրառված մուլտիմեդիոն տարրերը ոչ միշտ են հասկանալի դարձնում հարցերի ընկալումը:	Նյութերում օգտագործված են մեդիա աղբյուրներ իրենց հղումներով, մեդիա նյութեր՝ գծապատկերներ, դիագրամներ, ծաղրանկարներ, նկարներ, անիմացիաներ, տեսանյութեր, **վիճակագրական տվյալներ, սոց. հարցումներ** ձայնագրություններ: Մուլտիմեդիոն տարրերը ընդգծում են նյութի բովանդակային մասը և հասկանալի դարձնում բարդ հարցերի ընկալումը;
Ներկայացման բանավոր խոսք	Աշխատանքի արդյունքները ներկայացնում են ոչ հստակ: Խոսքը կցկտուր է, ոչ լիարժեք:	Ներկայացնում են աշխատանքի արդյունքները մասամբ: Մասամբ տիրապետում են ներկայացվող նյութին: Խոսքը սահուն է, սակայն բացակայում են հիմնավորումները:	Լիարժեք ներկայացնում են աշխատանքի բովանդակությունն ու արդյունքները: Թեմայի վերաբերյալ ներկայացնում են լրացուցիչ տեղեկատվություն: Խոսքը սահուն է, համոզիչ, առկա են հույզեր:	Լիարժեք ներկայացնում են աշխատանքի բովանդակությունն ու հիմնական դրույթները: Նյութը ներկայացնում են լիարժեք և բազմակողմանի: Խոսքը սահուն է, համոզիչ, փաստարկված, պատկերավոր և հուզականորեն հագեցած:

Միավորներ / Չափանիշներ	1-3	4-6	7-8	9-10
Գրաֆիկական ձևավորում	Աշխատանքը ներկայացված է պարզ շարադրանքի տեսքով: Մեծ ուշադրություն է դարձվել ցուցադրական նյութերին, ինչը խանգարում է բովանդակության ընկալմանը:	Աշխատանքը ներկայացված է շարադրանքի տեսքով, առկա են մեկ-երկու մեդիա նյութեր: Գրաֆիկական և մուլտիմեդիոն բաղադրիչները չեն խանգարում բովանդակության ընկալմանը, բայց ոչ միշտ են ճիշտ իրագործված, անհամաչափ են, չկա ընդհանուր ոճ:	Աշխատանքը ներկայացված է համակարգված, հստակ տեսանելի են հիմնական գաղափարներն ու դրույթները: Ձևավորման և բովանդակային տարրերը լրացնում և ընդգծում են միմյանց:	Աշխատանքը ներկայացված է համակարգված, հստակ տեսանելի են հիմնական գաղափարներն ու դրույթները: Մանկավարժական տեսակետից ձևավորման և բովանդակային տարրերը կազմում են մեկ ամբողջություն:
Խմբային աշխատանք	Խմբում աշխատանքային պարտականությունները չեն բաժանվել, և որոշ անդամներ ընդհանրապես չեն ընդգրկվել աշխատանքներին: Գործնականում խմբային աշխատանք չի իրականացվել:	Խմբի անդամների մեծ մասը մասնակցել է աշխատանքներին, բայց ծանրաբեռնվածությունը նրանց միջև անհավասարաչափ է բաշխվել:	Խմբի անդամների մեծ մասն իրենց ներդրումն ունեն ընդհանուր գործի մեջ:	Աշխատանքներին հավասարապես մասնակցել են խմբի բոլոր անդամները:
Ընդամենը				

Հավելված 1.

Հանրային քաղաքականություն հասկացությունը

Հանրային քաղաքականությունն առնչվում է իշխանությունների գործունեությանը և այդ գործընթացի մեջ քաղաքացիների մասնակցությանը: Այն տեղի է ունենում, երբ իշխանությունը փորձում է լուծել հանրության առջև ծառացած հիմնախնդիրները: Ուստի, հանրային քաղաքականության գործընթացի մեջ միշտ ընդգրկված են իշխանություններն ու հանրությունը:

Հանրություն ասելով այստեղ նկատի ունենք բնակչության այն հատվածը, որի վրա ազդում է այս կամ այն քաղաքականությունը: Օրինակ, երբ իշխանությունը կրթական բարեփոխումների միջոցով փորձում է բարելավել կրթության մատչելիությունը և որակը, տվյալ դեպքում հանրության անմիջական անդամներ են համարվում սովորողները, նրանց ծնողները, կրթության վարչական ղեկավարները, ուսուցիչները և դասախոսները:

Պետական իշխանությունների մշակած և իրականացրած գործողությունները պետք է ուղղված լինեն քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը: Դրանք սահմանված են ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և միջազգային համաձայնագրերով:

Այդ գործողությունները պետք է նպաստեն *հանրային բարիքին՝* համընդհանուր բարեկեցությանը:

Այսինքն՝ դրանք պետք է դրական փոփոխություններ առաջացնեն հանրային կյանքում, զարգացնեն այն:

Օրինակ՝ կրթական բարեփոխումները մեր երկրում նախաձեռնվել են, որպեսզի մեր հասարակությունը դառնա ավելի մրցունակ աշխարհում:

Հանրային քաղաքականությունն իշխանության մարմինների՝ հանրության հետ համաձայնեցված այն գործողություններն են, որոնցով իշխանությունն իրականացնում է իր պարտականությունները՝ պաշտպանելու քաղաքացիների իրավունքները և նպաստելու համընդհանուր բարեկեցությանը՝ հիմնախնդիրների լուծման միջոցով:

Հանրային քաղաքականության առանցքային տարրերն են.

- գործողությունների նախաձեռնում և իրականացում
- հանրային ռեսուրսների, պաշարների բաշխում, այդ թվում՝ ֆինանսական և մարդկային
- իշխանության մարմինների կողմից գործողությունների առկայություն կամ հանրության ազդեցություն իշխանության մարմնի վրա՝ որոշակի գործողություններ, քայլեր կատարելու ուղղությամբ
- խնդրի լուծում տվյալ ժամանակահատվածի ընթացքում
- հանրային բարեկեցություն

Հանրային քաղաքականության մասնակիցները

Հանրային քաղաքականության միջոցով իշխանության մարմինները փորձում են լուծումներ տալ հանրության կողմից բարձրացված հարցերին: Ժողովրդավարական հասարակությունում հանրության անդամներն իրենց հավանությունն են տալիս առաջարկվող լուծումներին: Հանրային քաղաքականության վարման գործում կենտրոնական դեր է վերապահված *իշխանության երեք ճյուղերին՝* օրենսդիր, գործադիր և դատական:

Օրինաստեղծ գործունեությունը մեր երկրում հիմնականում իրականացվում է քաղաքական կուսակցությունների կողմից: Հետևաբար, *քաղաքական կուսակցությունները* հանրային քաղաքականության գործուն մասնակիցներ են: Ժողովրդավարական հասարակությունում մարդիկ իրենց քվեն տալիս են կուսակցություններին, ելնելով **հասարակական, համայնքային տարբեր հիմնախնդիրների լուծման ուղղությամբ տվյալ կուսակցության որդեգրած դիրքորոշումից:**

Հանրային քաղաքականության մասնակիցների խումբ են հանդիսանում նաև *զանգվածային լրատվամիջոցները* (ԶԼՄ), քանի որ դրանց միջոցով իրականացվում են հանրային հարցերի քննարկումներ: ԶԼՄ-ները կարողանում են տեղեկությունը հասցնել մեծաքանակ ունկնդիրների կամ ընթերցողների: Մարդիկ, իրազեկվելով ԶԼՄ-ներից քննարկվող հիմնահարցի վերաբերյալ, շատ հաճախ հետաքրքրություն են դրսևորում այս կամ այն հարցի նկատմամբ, դիրքորոշում են ձևավորում, հնարավորություն են ստանում մասնակցել հարցի քննարկմանը:

Սովորաբար հանրության մեջ ձևավորվում են որոշակի հիմնախնդրի նկատմամբ միևնույն հետաքրքրություն ունեցող մարդկանց խմբեր՝ ***շահագրգիռ խմբեր,*** ովքեր ձգտում են իշխանությանը համոզել իրենց արժեհամակարգին և հետաքրքրություններին համապատասխանող քաղաքական գործողություններ, քայլեր մշակել և իրականացնել: Օրինակ, բնապահպանները ընդդիմանում են արդյունաբերության զարգացման նպատակով անտառահատումների իրականացմանը և այդ ուղղությամբ տարբեր միջոցառումներ են կազմակերպում՝ կառավարության վրա ազդելու, իրենց կարծիքով անցանկալի գործողությունները կանխելու նպատակով:



Շահագրգիռ խմբերը լինում եմ *ֆորմալ* և *ոչ ֆորմալ:* Նրանք գործում են հանրապետական, մարզային կամ համայնքային մակարդակով: Ֆորմալ շահագրգիռ խմբի օրինակ են հասարակական կազմակերպությունները: Համացանցի զարգացմանը զուգընթաց, որի շնորհիվ ձևավորվել են մի շարք *վիրտուալ խմբեր* (օրինակ՝ բնապահպանների կամ քաղաքային մշակութային հուշարձանների պահպանության ուղղությամբ Ֆեյսբուքում կամ այլ սոցիալական ցանցերում ստեղծված խմբերը), մեծացել է ոչ ֆորմալ խմբերի ազդեցությունը հանրային քաղաքականության վրա:

Հանրային քաղաքականության գործընթացի քայլերը

Հանրային քաղաքականության գործընթացը սկսվում է հիմնախնդրի բացահայտումից, որը կատարվում է մասնակիցներից մեկի կամ մի քանիսի միջոցով: Հիմնախնդրի բացահայտման համար կան տարբեր գործիքներ՝ մարդկանց հետ զրուցելը, մասնագետների կարծիքը, հարցազրույցների անցկացումը, իրավիճակի ուսումնասիրումը, կարիքների գնահատումը, դիտարկումը:

Հիմնախնդրի բացահայտումից հետո տեղի է ունենում հիմնախնդրի *ուսումնասիրում և քննարկում*: Քաղաքական կուսակցությունները հարցը քննարկում են Ազգային ժողովում, կարծիք հարցնում կառավարությունից և անհրաժեշտության դեպքում կազմակերպում են հանրային լսումներ, որի ժամանակ շահագրգիռ կողմերը ներկայացնում են իրենց մոտեցումները: Տվյալ դեպքում հանրային քաղաքականությունը ձևավորվում է օրենքի տեսքով և ընդունվում ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների մեծամասնության կողմից հավանության արժանանալու դեպքում:

ՀՀ կառավարությունը նախարարությունների և գերատեսչությունների միջոցով մշակում է օրենքի, որոշման, հայեցակարգի և այլ իրավական փաստաթղթերի նախագծեր, որոնք հավանություն արժանանալու դեպքում կյանքի են կոչվում: Օրենքի նախագծերը ներկայացվում է ՀՀ Ազգային ժողովի քննարկմանն ու հաստատմանը: Հարցի քննարկմանը մասնակցում են շահագրգիռ կառույցները, անհրաժեշտության դեպքում՝ հանրության տարբեր խմբեր:

Հաճախ հանրային քաղաքականության այս կամ այն ուղղության ձևավորումը նախաձեռնում են շահագրգիռ խմբերը, հասարակական կամ միջազգային կազմակերպությունները: Նրանց հիմնական նպատակն է բարելավել համայնքային կյանքի որոշակի կողմեր, որոնք հիմնված են այդ կառույցների արժեհամակարգին:

Վերջապես, հանրային քաղաքականության ձևավորման գործընթացում նախաձեռնություն են հանդես բերում առանձին մարդիկ կամ մարդկանց խմբերը: Նրանք դիմում են իշխանության տարբեր օղակներին՝ իրենց հետաքրքրող հիմնախնդրի լուծման ուղղությամբ բարեփոխումներ իրականացնելու համար: Այսպիսի նախաձեռնությունները տեղի են ունենում իշխանության մարմիններին այցելելու կամ նամակներ հղելու, իրենց կողմից ընտրված ներկայացուցիչների՝ պատգամավորների հետ հանդիպումների, ԶԼՄ-ների միջոցով, ինչպես նաև շահագրգիռ խմբերին դիմելով: Երբեմն, մարդկանց խմբերը, քաղաքական կուսակցությունները հուզող հիմնահարցերի մասին բարձրաձայնում են հավաքների կազմակերպման միջոցով:

Այսպիսով, հանրային քաղաքականության գործընթացի մուտքը՝ նոր գործընթացի սկիզբը կամ գործող քաղաքականության փոփոխումը, նախաձեռնվում են քաղաքական կուսակցությունների, առանձին մարդկանց և շահագրգիռ խմբերի կողմից իշխանություն-ների և զանգվածային լրատվամիջոցների միջոցով:

Արդյունք: Հանրային քաղաքականության ուղղությամբ նախաձեռնության, քննարկման և ուսումնասիրման *արդյունքում* իշխանության լիազոր մարմնի կողմից ընդունվում են

- օրենքներ
- ծրագրեր, հայեցակարգեր
- որոշումներ
- հրամանագրեր, հրամաններ, կարգադրություններ
- կարգեր և այլն:

Իրականացում: Երբ արդեն կայացվում է համապատասխան որոշումը, պատասխանատուները պարտավոր են իրականացնել տվյալ հանրային քաղաքականությունը՝ համաձայն գործողությունների այն ծրագրի, որը իրավասու պետական մարմինը մշակել է՝ ելնելով ընդունված քաղաքականությունից:

Գնահատում, արժևորում: Հանրային քաղաքականության վերաբերյալ որոշում կայացնելու պահից սկսվում է դրա իրականացումը, որին զուգահեռ տեղի է ունենում այդ գործընթացի գնահատումը, արժևորումը:

Այն է՝

- արդյո՞ք առաջարկվող քաղաքականությունը լավ, արդյունավետ ձևով է իրականացվում
- արդյո՞ք այն հանգեցնում է հանրային բարեկեցության լավացմանը
- արդյո՞ք պաշտպանվում են մարդու իրավունքները և ազատությունները
- արդյո՞ք օգտագործվող միջոցները ուղղվում են նախատեսված նպատակներին
- արդյո՞ք լավ է կառավարվում այդ գործընթացը:

Գնահատումը կատարվում է քաղաքականության իրականացման գործընթացի դիտարկման, դրան մասնակցելու կամ ուսումնասիրելու միջոցով: Գնահատողի դերում կարող է լինել ցանկացածը, ով շահագրգռված է կամ առնչություն ունի այդ քաղաքականությանը, ներառյալ՝ դրա մասնակիցները: Մենք՝ ինքներս, մեր ծնողները շատ հաճախ հանդիսանում ենք քաղաքականության իրականացման այս կամ այն գործողության գնահատողներ, երբ դրանք առնչվում են մեր կյանքին: Մենք փորձում ենք հասկանալ, թե ինչ է կատարվում, հետևում ենք, թե ինչպես է այն կատարվում և մեր ունեցած տեղեկությունների հիման վրա կարծիք ենք ձևավորում:

Հետադարձ կապ: Գնահատում կատարելուց և կարծիք ձևավորելուց հետո տեղի է ունենում տեսակետների փոխանակում, որի միջոցով իշխանության մարմինները, կազմակերպությունները կամ մարդիկ *հետադարձ կապ* են տրամադրում որոշակի հանրային քաղաքականություն վարողներին: Երբեմն դրանք դրական են լինում, երբեմն՝ բացասական: Շատ կարևոր է, որ հետադարձ կապը հնարավորություն տա քաղաքականություն վարողներին հասկանալ իրենց կողմից որդեգրված քաղաքակա-նության թերություններն ու առավելությունները, որպեսզի գործի շտկման ուղղությամբ համապատասխան քայլեր արվեն:

Հետադարձ կապ իրականացնելու ընթացքում տեղի է ունենում հիմնախնդրի քննարկում և դրա լուծմանն ուղղված հանրային քաղականության վերանայում: Այդ ընթացքում տեղի է ունենում.

ա. շարունակվում է տվյալ քաղաքականության վարումը,

բ. կատարվում են փոփոխություններ քաղաքականության մեջ,

գ. մշակվում է նոր քաղաքականություն,

դ. դադարում է քաղաքականության իրագործումը՝ հիմնախնդրի լուծման դեպքում:

Հավելված 2. Սահիկաշարի բովանդակությունը և կառուցվածքը

Ներքոբերյալ աղյուսակում ներկայացվում է սահիկաշարի բովանդակության ուղղորդող կառուցվածքը:

Սահիկի համարը	Սահիկի ենթավերնագիրը	Սահիկի բովանդակությունը
Սահիկ 1	Նախագծի թեման, հեղինակային խումբը:	Սահիկի ներքևի հատվածում գրվում է մարզը, համայնքը, դպրոցը:
Սահիկ 2- 3	Ներածություն:	Շարադրվում է, թե ինչու է կարևոր հիմնախնդիրը (տեղադրվում են հիմնախնդիրը փաստող նկարներ):
Սահիկ 4- 10	Հետազոտության ընթացք և տվյալների հավաքագրում:	Համառոտ ներկայացվում է ուսումնասիրված տեղեկատվությունը, հավաքագրված տվյալների վերլուծությունը՝ նշելով աղբյուրները (տեղադրվում են հարցազրույցների նկարներ, ձայնագրություններ, գծապատկերներ և այլն):
Սահիկ 11-13	Եզրակացություն, վերջնական արդյունք:	Ներկայացվում են կատարված ուսումնասիրությունների արդյունքում հիմնահարցերի պատասխանները և պրոդուկտը:

Հավելված 3.

Նախագծային աշխատանքի պլանավորման ձևաթղթի նմուշօրինակ 1.

ԹԵՄԱ՝ «ԲՈՒԼԻՆԳԻ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ»	
Տարիքային խումբը	14- 16
Ուսումնական տարի, կիսամյակ	2024-25 թթ., 2-րդ կիսամյակ
Տևողություն՝	8 շաբաթ
Նախատեսված ժամաքանակ	18 ժամ
Նախագծի իրականացման փուլերը	1. Նախագծի հիմնախնդրի հիմնավորում, ուղղորդող հարցերի մշակում, աշխատանքի բաժանում: 2. Աշխատանք տեղեկատվական աղբյուրների հետ (համացանց, մասնագիտական խմբեր, մասնագիտական կառույցներ և այլն), անելիքների քարտեզագրում: 3. Միջանկյալ քննարկումներ: Հարցվողների թիրախային խմբերի ընտրություն: Հարցաթերթիկների կազմում: 4. Հարցումների կամ հարցազրույցների անցկացում: 5. Հավաքագրված տեղեկությունների ամփոփում, վերլուծություն: Անդրադարձ: 6. Սոցիալական հոլովակի պատրաստում (պրոդուկտ): 7. Սահիկաշարի պատրաստում: 8. Հանրային ներկայացում: Գնահատում:

Տիպը՝	☐ Իրական կյանքին վերաբերող խնդիրներին միտված նախագծեր: ☐ Դիրքորոշում ներկայացնող և պաշտպանող նախագծեր: ☐ Ձևաչափերի, մոտեցումների նոր լուծումներ առաջարկող նախագծեր: ☐ Վերացական/փիլիսոփայական հարցեր քննող նախագծեր: ☐ Բուն հետազոտական նախագծեր:
Նախագծի նպատակը	
Ձևավորել բուլինգի դրսևորումներն ուսումնասիրելու, դրանց կանխարգելմանն ուղղված գործողությունների ծրագրեր առաջարկելու կարողություններ:	
Վերջնարդյունքները	
Ուսումնասիրել «բուլինգը», որպես ագրեսիվ վարքագիծ, վերլուծել դրդապատճառները և հետևանքները, մշակել հակազդման արդյունավետ միջոցներ, քննադատորեն վերլուծել երևույթին առնչվող իրավիճակներ, արդյունավետ կիրառել միդիագործիքները՝ հանրային իրազեկում ապահովելու նպատակով:	
Ուղղորդող հարցեր	
1. Ի՞նչ է բուլինգը և ո՞րն է հիմնախնդրի կարևորությունը: 2. Ինչպե՞ս է հիմնախնդիրն ազդում հասակակիցների վրա: 3. Ի՞նչ հետևանքներ կարող է ունենալ հիմնախնդիրը հասարակական տարբեր խմբերի վրա: 4. Որո՞նք են հիմնախնդրով մտահոգ կառույցները: 5. Ի՞նչ կարող ենք անել մենք՝ հիմնախնդրի լուծմանն աջակցելու համար:	

Նախագծի նկարագիրը
Քննարկվելու է, թե ինչ է իրենից ներկայացնում «բուլինգը», ինչու է կարևոր հիմնախնդիրը: Այնուհետև, ձևակերպվելու են հիմնախդրի ուսումնասիրությանն աջակցող ուղղորդող հարցերը և կատարվելու է աշխատանքի բաժանում: **Ա.** Թեմային առնչվող տեղեկատվական տվյալների հավաքագրում՝ • երևույթի առկայությունը սոցիալական ցանցերում, • երեխաների իրավունքներին առնչվող փաստաթղթերի ուսումնասիրություն, • հիմնախնդրով հետաքրքրված անձանց, կառույցների և կազմակերպությունների քարտեզագրում:
Առաջարկվում է ուսումնասիրել մեդիա աղբյուրներ, (լրատվամիջոցներ, համացանց, դասագիրք, ուսումնական նյութեր, ուսումնաօժանդակ գրականություն և այլն), մուլտիմեդիա նյութեր (տեսանյութեր, ձայնագրություններ, նկարներ, ատլասներ, գրաֆիկներ, դիագրամներ, պատկերներ, անիմացիաներ, վիճակագրական տվյալներ, սոց. հարցումներ և այլն), և դուրս բերել հիմնախնդրին առնչվող առկա օրենսդրությունը կամ քաղաքականությունը՝ պարզելու թե օրենդրական ի՞նչ կարգավորումներ կան տվյալ ոլորտում, հանրային իշխանության ո՞ր օղակներն ու մարմիններն են պատասխանատու տվյալ խնդրի լուծման համար: **Բ.** Հստակեցվում է հարցվողների թիրախային խմբերը: Համատեղ մշակվում է հարցումների և հարցաթերթիկների բովանդակությունը: Ամփոփվում է հիմնախնդրի վերաբերյալ մարդկանց իրազեկվածության մակարդակն ու վերաբերմունքը, ինչպես նաև հավաքագրվում օգտակար տեղեկույթ հիմնախնդրի վերաբերյալ համապատասխան կառույցներից, մասնագիտական խմբերից և այլն: **Գ.** Ամփոփվում է կատարված աշխատանքը, ընտրվում ստացած արդյունքները վերլուծելու և ներկայացնելու եղանակ, օրինակ՝ սահիկաշար: Նախագծի արդյունքը (պրոդուկտը) սոցիալական հոլովակի ստեղծումն ու տարածումն է:

Գնահատում
Գնահատումն իրականացվում է նախապես մշակված ռուբրիկի միջոցով:

Նախագծային աշխատանքի պլանավորման ձևաթղթի նմուշօրինակ 2.

ԹԵՄԱ՝ ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԿԱՍԸ	
Տարիքային խումբը	12- 14
Ուսումնական տարի, կիսամյակ	2023-24թթ., 2-րդ կիսամյակ
Տևողություն՝	10 շաբաթ
Նախատեսված ժամաքանակ	20 ժամ

Նախագծի իրականացման փուլերը	1. Ուսումնական նախագծի հիմնախնդրի կարևորության հիմնավորում: Անելիքների քարտեզագրում: 2. Աշխատանքային խմբերի ձևավորում և աշխատանքի բաժանում: 3. Աշխատանք տեղեկատվական աղբյուրների հետ /համացանց, գրադարաններ, պատասխանատուներ, կառուցներ և այլն: 4. Ստացված արդյունքների միջանկյալ քննարկում, գործողությունների ծրագրի մշակում: 5. Գովազդային հոլովակի պատրաստում: 6. Ամփոփում և հանրային ներկայացում:

Տիպը՝	☐ Իրական կյանքին վերաբերող խնդիրներին միտված նախագծեր: ☐ Դիրքորոշում ներկայացնող և պաշտպանող նախագծեր: ☐ Ձևաչափերի, մոտեցումների նոր լուծումներ առաջարկող նախագծեր: ☐ Վերացական/փիլիսոփայական հարցեր քննող նախագծեր: ☐ Բուն հետազոտական նախագծեր:

Նախագծի նպատակը
Ձևավորել կարիքները և ցանկությունները հիմնավորելու, ռեսուրսները խնայողաբար իրացնելու և խնայողության մշակույթը տարածելու կարողություններ:
Վերջնարդյունքները
Ուսումնասիրել ռեսուրսների կառավարման ուղղությամբ առկա փորձը, ընկալել տեխնոլոգիական գիտելիքի կիրառման հնարավորությունները մարդու պահանջմունքների համատեքստում, նախաձեռնել խնայողության մշակույթի տարածմանն ուղղված գործողություններ:
Ուղղորդող հարցեր
1. Ո՞րն է ընտրված հիմնախնդրի կարևորությունը մեր համայնքում: 2. Ինչպե՞ս է հիմնախնդիրն ազդում համայնքի բնակիչների բարեկեցության վրա: 3. Ի՞նչ հետևանքներ կարող է ունենալ հիմնախնդիրը համայնքում ապրող երիտասարդ ընտանիքների ապրելակերպի վրա: 4. Ի՞նչ կարող ենք անել մենք՝ հիմնախնդրի լուծմանն աջակցելու համար:

Նախագծի նկարագիրը
Ա. Նախատեսվում է ուսումնասիրել մեդիա աղբյուրներ, (լրատվամիջոցներ, համացանց, դասագիրք, ուսումնական նյութեր, ուսումնաօժանդակ գրականություն և այլն), մուլտիմեդիա նյութեր (տեսանյութեր, ձայնագրություններ, նկարներ, ատլասներ, գրաֆիկներ, դիագրամներ, պատկերներ, անիմացիաներ, վիճակագրական տվյալներ, սոց. հարցումներ և այլն) և դուրս բերել հիմնախնդրին առնչվող տեղեկությունները: **Բ.** Հստակեցնել հարցվողների թիրախային խմբերը: Մշակել հարցաթերթիկներ: Հարցումների և/կամ հարցազրույցների միջոցով պարզել հիմնախնդրի վերաբերյալ քաղաքացիների իրազեկվածության մակարդակն ու վերաբերմունքը, ինչպես նաև հավաքագրել օգտակար տեղեկույթ հիմնախնդրի վերաբերյալ համապատասխան պատկան մարմիններից, մասնագիտական կառույցներից/ կազմակերպություններից և այլն: Գ. Ամփոփել դուրս բերված տեղեկատվությունն ու հարցումների պատասխանները, ընտրել ստացած արդյունքները վերլուծելու և ներկայացնելու եղանակ: Նախագծի արդյունքը (պրոդուկտը) գովազդային հոլովակի ստեղծումն ու տարածումն է:
Գնահատում
Գնահատումն իրականացվում է նախապես մշակված ռուբրիկի միջոցով:

Օգտագործված գրականության ցանկ

1. BIE Book Excerpt: The Roots of Gold Standard PBL in Kilpatrick and Dewey. https://my.pblworks.org/resource/blog/bie_book_excerpt_the_roots_of_gold_standard_pbl_in_kilpatrick_and_dewey .
2. Bloom's Taxonomy. https://cft.vanderbilt.edu/guides-sub-pages/blooms-taxono my/
3. Crosscutting Concepts in the Next Generation Science Standards. https://nap.nationalacademies.org/read/18290/chapter/13 13. Educational Equity & PBL. https://www.pblworks.org/educational-equity 14. Gold Standard PBL: Essential Project Design Elements https://www.pblworks.org/what-is-pbl/gold-standard-project-design
4. Next Generation Science Standards – NGSS.
5. https://www.cde.ca.gov/pd/ca/sc/ngssfaq.asp#e2
6. Performance Based Assessment https://www.projectappleseed.org/assessment
7. Positive Youth Development (PYD) Framework https://www.youthpower.org/positive-youth-development-pyd-framework.
8. Positive Youth Development Illustrative Indicators. https://www.youthpower.org/sites/default/files/YouthPower/resources/PYD%20Indicators%20Brief%20 final%203..pdf
9. Rubric for Assessment of the Agrumemntative Essay. https://pier.macmillan.yale.edu/sites/default/files/ files/Argumentative%20essay%20rubric.pdf
10. Reflective Essay Rubric, USC Center for Execellence and Teaching.
11. https://cet.usc.edu/teaching-resources/reflective-essay-rubric/?fbclid=IwAR0gMPAgkQ3QmyOzdV4kap4nct RQtQmV15kTTQAAHLAey9x-tu1edtLGWSs.

21. "Setting the Standard for Project Based Learning", John Larmer, John Mergendoller, Suzie Boss, Alexandia, VA, USA.

12. The Cambidge Handbook of Learning Sciences, Blumenfeld, Kempler, & Krajcik, 2006.
13. The Purpose of Building a Portfolio Assessment
14. https://www.thoughtco.com/the-purpose-of-building-a-portfolio-assessment-3194653

Co-funded by the European Union

KONRAD ADENAUER STIFTUNG

YOUTH INITIATIVE CENTRE

World Vision ARMENIA

MEDIA INITIATIVES CENTER

«Երիտասարդները գործելիս. Հայաստանում երիտասարդներիզորեղացման և առաջնորդության խթանման» ծրագիր
“Youth in Action: Youth Empowerment and Leadership Development in Armenia”